

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՇԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

07.12.2014

1988թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժի 26-րդ տարելիցի առիթով Գավառ քաղաքում Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանի և Գավառի քաղաքապետի տեղակալ Գրիգոր Բոշյանի գլխավորությամբ Մեծ երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշաքարին ծաղիկներ և ծաղկեպսակներ դրեցին Գեղարքունիքի մարզպետարանի և Գավառի քաղաքապետարանի աշխատակիցները, նշված կառույցների ենթակայությամբ գործող հիմնարկ ձեռնարկությունների ներկայացուցիչներ, դպրոցականներ, համայնքների ղեկավարներ, անհատ քաղաքացիներ: Երկրաշարժի անմեղ զոհերի հոգիների հանգստության համար Գավառ քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցում Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանի ձեռամբ մատուցվեց հոգեհանգստի կարգ: Արարողության մասնակիցները հիշատակի առիթով կատարեցին նաև մոմավառություն: